Կարծիք

«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

ՀՀ արդարադատության նախարարության կողմից քննարկման է ներկայացվել «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը, որի վերաբերյալ առկա են հետևյալ նկատառումները.

1. Հակակոռուպցիոն կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) օպերատիվ ստորաբաժանման կադրային համալրման խնդիրը կոմիտեի ձևավորման սկզբնական փուլից դիտարկվել է կարևորագույն խնդիրներից մեկը՝ հաշվի առնելով կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման գործում դրա հիմնարար դերակատարումը, ինչպես նաև օպերատիվ ստորաբաժանման ծառայողների գերատեսչական և այլ ազդեցություններից անկախության ապահովման, մասնագիտական բարձր որակների ապահովման հանգամանքը: Կոմիտեի մասին մայր օրենքի իրավակարգավորումները հնարավորություն չեն ընձեռել համալրել օպերատիվ ստորաբաժանումը (այն համալրվել է կիսով չափ), արդյունքում անհրաժեշտություն առաջացավ որոշակի փոփոխություններ իրականացնել օպերատիվ ստորաբաժանման որոշակի խումբ ծառայողներին ներկայացվող պահանջներում: Նման փոփոխության անհրաժեշտության մասին բարձրաձայնվել է նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ տարբեր քննարկումներում և տարբեր ձևաչափերով իրականացված հանդիպումների ընթացքում: Ներկայացված նախագիծը սակայն ունի բավական խնդրահարույց կարգավորումներ: Մասնավորապես՝ նախագծի հոդված 1-ով առաջարկվում է օրենքի 16-րդ հոդվածը լրացնել 12.1 մասով, սահմանելով, որ կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման այն պաշտոնները, որոնցում ծառայողների գործառույթների իրականացումը պայմանավորված է տեղեկատվական տեխնոլոգիաների, տնտեսագիտության և այլ բնագավառների հատուկ մասնագիտական գիտելիքների և հմտությունների կիրառմամբ, հաստատում է կոմիտեի նախագահը: Տվյալ պաշտոնի նշանակելու կարգը, պայմանները, այդ թվում՝ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, 16-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերով նախատեսված պայմանների կիրառման անհրաժեշտության մասով, և ծառայողին ներկայացվող պահանջները սահմանում է կոմիտեի նախագահը:

   Կոմիտեի մասին օրենքի 16-րդ հոդվածի 12-րդ մասի ձևակերպման տրամաբանությունը հուշում է, որ բացառապես կոմիտեի օպերատիվ ստորաբաժանման ծածկագրված ծառայողների պաշտոնի **նշանակելու կարգ** կարող է սահմանել կոմիտեի նախագահը, ինչը կարող է դիտարկվել օրինաչափ: Օպերատիվ ստորաբաժանման մյուս պաշտոնների համալրումը, համաձայն օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի՝ իրականացվում է կոմիտեի նախագահի սահմանած կարգով և պայմաններով անցկացվող **մրցույթի արդյունքների** հիման վրա:

   Համաձայնելով այն հանգամանքին, որ կոմիտեի օպերատիվ ստորաբաժանման ոչ բոլոր ծառայողների համար է անհրաժեշտ սահմանել ֆիզիկական պատրաստվածության քննական փուլի պարտադիր պահանջ, իրավաբանական կրթության պահանջ, միաժամանակ հարկ է նշել, որ բացի ծածկագրված ծառայողների նշանակման կարգից, օպերատիվ ստորաբաժանման մյուս բոլոր պաշտոնները պետք է համալրվեն բացառապես մրցույթի արդյունքում, ինչը սակայն առաջարկվող նախագծով տնտեսագետ, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մասնագետ և այլ ուղղվածության մասնագիտությամբ օպերատիվ ծառայողների պաշտոնների համար չի դիտարկվում պարտադիր և կոմիտեի նախագահի կողմից կարող է սահմանվել այլ կարգ, ինչպես օրինակ՝ ուղղակի նշանակումը: Այս պարագայում հարց է առաջանում, թե ինչ չափանիշներով է որոշվելու թեկնածուի նշանակման արժանիքահեն գործոնը,

օրինակ՝ մի քանի թեկնածուների առկայության դեպքում: Բացի այդ օրենքի նախագծի կարգավորման դաշտում առկա՝ կոմիտեի նախագահի նման լայն հայեցողության պայմաններում մրցույթային կարգ սահմանելիս մրցույթային հանձնաժողովի մասնագիտական կազմն ի զորու՞ է արդյոք որոշել թեկնածուների մասնագիտական պատրաստվածության և դրա աստիճանի հանգամանքները:

Հարկ է արձանագրել, որ որքան էլ կարևոր է կոմիտեի օպերատիվ ստորաբաժանման հրատապ համալրման հիմնախնդիրը, դրա վերաբերյալ իրավակարգավորումները չպետք է հետընթաց արձանագրեն գործընթացի թափանցիկության և մրցակցայնության ապահովման սկզբունքներից և կրեն իրադրային բնույթ: Ընդ որում, վերոնշյալը որևէ կերպ չի հակասում օպերատիվ ստորաբաժանման գործունեության գաղտնիության սկզբունքին, քանի որ ինչպես նշվեց, խոսքը ծածկագրված պաշտոնների մասին չէ:

Առաջարկ.

- Նախագծի հոդված 1-ով սահմանել, որ կոմիտեի օպերատիվ ստորաբաժանման տնտեսագիտության, տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ բնագավառների հատուկ մասնագիտական հմտությունների կիրառում պահանջող պաշտոնների համալրումը իրականացվում է կոմիտեի նախագահի սահմանած կարգով և պայմաններով անցկացվող մրցույթի արդյունքների հիման վրա,
- նախագծով ամրագրել յուրաքանչյուր ոլորտի օպերատիվ ծառայողի պաշտոնի համալրման մրցույթային հանձնաժողովում համապատասխան ոլորտի մասնագետների ներգրավման պարտադիր պահանջ:

2. Ներկայացված նախագծի 45.1 հոդվածի 2-րդ մասով առաջարկվում է կոմիտեի բոլոր ծառայողների համար պարտադիր պահանջ՝ պարբերաբար անցնել նաև ֆիզիկական ուժի կիրառման անհրաժեշտություն առաջացնող իրադրություններում գործելու ունակությունը որոշող ստուգումներ: Առաջարկում առկա է հակասություն նախագծի հոդված 1-ով նախատեսված իրավակարգավորման հետ, որում նեղ մասնագիտական ուղղվածության օպերատիվ ծառայողների համար ֆիզիկական պատրաստվածության պահանջն ըստ էության հանվում է: 45.1 հոդվածի 2-րդ մասը չի նախատեսում օպերատիվ ծառայողների տարբեր խմբերի համար բացառություն՝ ֆիզիկական ուժի կիրառման ստուգումներ անցնելու մասով և չի ամրագրում նման ստուգում չանցնելու հետևանքների մասին իրավակարգավորում:

Առաջարկ.

- Նախագծի 45.1 հոդվածի 2-րդ մասում նախատեսել, որ ֆիզիկական ուժի կիրառման անհրաժեշտություն առաջացնող իրադրություններում գործելու ունակությունը որոշող ստուգումներ անցնելու պարտականություն սահմանող իրավակարգավորումը չի տարածվում տնտեսագիտության, տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ բնագավառների հատուկ մասնագիտական գիտելիքների և հմտությունների կիրառում պահանջող օպերատիվ ծառայողերի նկատմամբ: Նշված առաջարկը համահունչ է նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող լրացմանը՝ ֆիզիկական պատրաստվածության պարտադիր քննական պահանջը հանելու մասով: